FROM ORPHANAGE TO ARTSAKH WAR

Posted on January 9, 2012 by Keghart



Category: Opinions

Igor Has No ID Certificate, No Work

Kristine Aghalaryan, Hetq Online, 14 January 2012
Please click here for **Humanitarian Petition to Armenia's Authorities**

- Igor Ghahramanyan was fired from his job just before the New Year. The reason – he has no identity certificate*.

Even though he served on the frontline in the Artsakh War, Armenia's Passport and Visa Section (OVIR) doesn't believe this fact alone entitles Igor to possess an identity certificate.

Igor Has No ID Certificate, No Work

Kristine Aghalaryan, Hetq Online, 14 January 2012
Please click here for **Humanitarian Petition to Armenia's Authorities**

- Igor Ghahramanyan was fired from his job just before the New Year. The reason – he has no identity certificate*.

Even though he served on the frontline in the Artsakh War, Armenia's Passport and Visa Section (OVIR) doesn't believe this fact alone entitles Igor to possess an identity certificate.

Click here for the Armenian version.
Watch the video:
The young man is caught in the midst of an Armenian "Catch 22" a la Kafka.

"This country will not issue me an identity certificate since I have no birth certificate. But ever since I opened my eyes, I have seen only Armenia. I have served in this country's military. All I want is a piece of paper so I can keep my job," Igor says.
Igor was raised in an orphanage and left in 1991. He was conscripted soon afterwards.

The 35 year-old remembers little about his childhood; only that his parents were Armenians living in Ukraine. Igor spent the first 5-6 years of his life there as well. He can't say how he wound up in the orphanage.

Ovir says an applicant must produce a birth certificate for citizenship papers. Through his grandfather, Igor was able to get the certificate years ago. He lost the certificate when he was living on the streets.

Ovir officials have told Igor that he can apply to the Ukraine Embassy in Armenia for another birth certificate for a fee of $100. Igor doesn't have that kind of money.

The young man says he's willing to do any kind of work and that he's a "jack of all trades."

After leaving the army, Igor was forced to live on the streets. Five years ago, his workplace found him a small room at the former dormitory building on Tbilisi Lane. Igor fixed the place up and made it habitable.

The room measures 12 square meters. Igor can't afford to use an electric heater during the cold of winter. The floor is always wet from the broken water pipes in the basement below.

Igor is married with three kids. He never invites them over to visit out of embarrassment. The children live with his wife at her parents' home.

Like many former orphanage residents in Armenia, Igor never tells prospective employers about his childhood. There's a serious stigma attached to being raised an orphan in Armenia.

Igor says that he's found much better work at decent wages when he's kept mum about being an orphan. Otherwise, he's been forced to work "off the books" for pennies.

He told me that things were so bad when he was living rough in the open that he often made a public nuisance of himself just to get arrested and spend a night or two in a warm jail cell.

** The Armenian version of this article reads* ***անձնագիր*** *which would translate into "identity certificate".* **Ed.**

Մանկատնից պատերազմ, պատերազմից փողոց ու մինչ օրս՝ առանց անձնագիր

Քրիստինե Աղալարյան, Հետք, 14 հունվարի, 2012

Իգոր Ղահրամանյանին Նոր տարվա նախաշեմին աշխատանքից ազատել են, որովհետև նա անձնագիր չունի:

«Քանի տարեկան ես» հարցին Իգորը կատակով է ապատասխանում. «25-ից հետո էլ չեմ հաշվել», բայց քիչ անց մոտավոր ասում է՝ երևի 35: Իգորը մանկատան շրջանավարտ է: Դուրս է եկել մանկատնից 1991 թվականին: Տեղավորվել է հանրակացարանում, շուտով զորակոչվել է Հայոց բանակ: Իգորը Արցախյան պատերազմի ժամանակ առաջին գծում է եղել՝ հատուկ նշանակության ջոկատում, նույնիսկ երկու պատվոգիր ունի, բայց դա էլ ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության համար հիմք չի հանդիսանում, որ Իգորին անձնագիր տան:

«Էս երկիրն ինձ անձնագիր չի տալիս, որովհետև չունեմ ծննդական, բայց աչքերս ինչ բացել եմ, Հայաստան եմ տեսել: Ծառայել եմ այս երկրում, էդ դեպքում ինչի՞ չեն տալիս: Ուզածս ի՞նչ է, թղթի մի կտոր, որ ես այսօր աշխատանքս կայուն պահեմ»,- ասում է Իգորը:

Իգորն իր ծնողների և վաղ տարիքի մասին քիչ տեղեկություններ ունի: Միայն գիտի, որ ծնողները Ուկրաինայի հայեր են եղել, ինքն էլ մինչև 5-6 տարեկանն այնտեղ է ապրել: Թե ինչ է տեղի ունեցել ծնողների միջև և ինչպես է հայտնվել մանկատանը, չգիտի, միայն հիշում է իրեն արդեն մանկատանն ապրելիս:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն և անձնագիր տալու համար ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը պահանջում է Իգորի ծննդականը: Իգորը պապի միջոցով նախկինում կարողացել է ծննդական ստանալ, սակայն երբ անօթևան է եղել և փողոցներում գիշերել, կորցրել է: Անձնագրային և վիզաների վարչությունում Իգորին ասել են, որ կարող է իր ծննդականը Հայաստանում Ուկրաինայի դեսպանատան միջոցով կրկին ստանալ, իսկ դեսպանատունն այդ հարցման համար 100 դոլարի սահմաններում պետական վճարներ է պահանջում: Իգորը չի կարողանում վճարել, և անձնագրի հարցը մինչ օրս առկախ է: Հենց անձնագիր չունենալու պատճառով զրկվել է մի շարք աշխատանքներից: Իգորին երեկ Անձնագրային և վիզաների վարչություն են կանչել, բայց ձեռքին 100 դրամ չունի, որ տանից դուրս գա: Իգորն ասում, է, որ պատրաստ է ցանկացած աշխատանք կատարել՝ պահակությունից սկսած մինչև շինարարություն և «էլեկտրիկություն»: Իգորը փայտից քանդակներ է սարքում, արծաթից՝ իրեր: «Ես ամեն ինչ կարող եմ, կյանքի բերումով ամեն ինչ սովորել եմ, միայն թե մի աշխատանք լինի»,- ասում է Իգորը:

Որպես մանկատան շրջանավարտ նրան բնակարանով չեն ապահովել, չնայած «Պետական աջակցություն մանկատան շրջանավարտներին» ծրագրի շահառու է: Պատերազմից վերադառնալուց հետո փողոցներում է ապրել, գիշերել է որտեղ մի քիչ տաք ու հարմար է եղել: 5 տարի առաջ իր կատարած աշխատանքի դիմաց Իգորին տվել են Թբիլիսյան խճուղում գտնվող հանրակացարանի նախկին շենքի առաջին հարկի փոքր խուցը: Հանրակացարանի «ժեխանոց» կոչված սենյակը Իգորն է նորոգել փոքր-ինչ, կահավորել և իր համար ապրելու կացարան սարքել:

Շուրջ 12 քմ սենյակը ձմռան ցրտերին չի ջեռուցում, որովհետև չի կարողանում վճարել սպառած էլեկտրաէներգիայի գումարը: Սենյակը լուսավորելու համար հարևանի տնից մի գիծ է անցկացրել մինչև կարողանա մարել կուտակված պարտքերը: Հատակի կարպետը մշտապես թաց է, նկուղում խողովակներ են տրաքել, ջրերի խոնավությունը ներթափանցում է սենյակ, իսկ ներս մտնելուց խոնավաության հոտ ես զգում: Սենյակում շարժվելու տեղ չկա, մտնելուն պես պետք է նստես, որ տեղավորվես: Չնայած այս ամենին, Իգորի մոտ գիշերելու են գալիս մանկատան շրջանավարտներ, որոնց համար Իգորը վերմակներ է պահում: Այս պայմանների պատճառով է, որ Իգորը

չի կարողանում իր երեխաներին իր տուն բերել: Նա երեք երեխա ունի, որոնք ապրում են կնոջ հետ՝ նրա հայրական տանը:

Իգորն ամաչում է, որ մանկատան սան է: Նա այդ փաստը միշտ թաքցնում է հատկապես աշխատանքի անցնելու ժամանակ: Սեփական փորձով է համոզվել՝ երբ ասել է մանկատանն է մեծացել, չնչին աշխատավարձով սևագործ աշխատանքների են ընդունել: Իսկ երբ թաքցրել է այդ փաստը, համեմատաբար լավ աշխատանք է գտել: Նա այդ փաստը թաքցրել է նաև այն ժամանակ, երբ օթևան չի ունեցել և կայարաններում է քնել, մուտքերում, երբեմն էլ դրսում: Իսկ երբ քնելու տեղ չի ունեցել, փորձել է միջադեպեր ստեղծել, որպեսզի ոստիկանությունում հայտնվի, այնտեղ գիշերի, որովհետև ոստիկանության խցերն ավելի տաք են, քան բացօթյա նստարանները կամ շենքերի մուտքերը: